

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2022

ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ

ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի
անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ
ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Թեստ 3

1 Որո՞նք են հարձակման ձևերը:

1. Հարձակում հարձակվող հակառակորդի վրա, հարձակում նահանջող հակառակորդի վրա, հարձակում պաշտպանվող հակառակորդի վրա:
2. Հարձակում խուճապի մատնված հակառակորդի վրա, հարձակում հարձակվող հակառակորդի վրա, հարձակում պաշտպանվող հակառակորդի վրա:
3. Հարձակում նահանջող հակառակորդի վրա, հարձակում հարձակվող հակառակորդի վրա, հարձակում դիմակայող հակառակորդի վրա:
4. Հարձակում հարձակվող հակառակորդի վրա, հարձակում պաշտպանվող հակառակորդի վրա:

2 Ինչպե՞ս կարող է իրականացվել պաշտպանությունը:

1. Հարկադրված, նախանշված:
2. Կանխատեսված, հարկադրված:
3. Նախատեսված, կանխատեսված:
4. Կանխատեսված, նախանշված:

3 Ինչպիսի՞ն է մոտոհրաձգային ջոկի կազմը զինված ՀՄՄ-ով գործելիս:

1. Ջոկի հրամանատար, նշանառու օպերատոր, վարորդ, նոնականետորդ, նոնականետորդի օգնական, գնդացրորդ, ավագ հրաձիգ, հրաձիգներ:
2. Ջոկի հրամանատար, նշանառու գնդացրորդ, մեխանիկ վարորդ, նոնականետորդ, նոնականետորդի օգնական, գնդացրորդ, ավագ հրաձիգ, հրաձիգներ:
3. Ջոկի հրամանատար, նշանառու օպերատոր, մեխանիկ վարորդ, նոնականետորդ, նոնականետորդի օգնական, գնդացրորդ, ավագ հրաձիգ, հրաձիգներ:
4. Ջոկի հրամանատար, նշանառու օպերատոր, մեխանիկ վարորդ, նոնականետորդ, նոնականետորդի օգնական, ավագ հրաձիգ, հրաձիգներ:

4 Հակառակորդին ոչնչացնելու ի՞նչ մարտական հնարավորություն ունի մոտոհրաձգային ջոկը հարձակման ժամանակ:

1. 1 տանկ, 1 ՀՄՄ, զինվորների մի խումբ:
2. 2 տանկ, 2-3 ՀՄՄ, զինվորների մի խումբ:
3. 1 տանկ, 2 ՁՓ, 2 ՀՄՄ, զինվորների մի խումբ:
4. 2 տանկ, 2-3 ՀՄՄ, 10-12 զինվորներ:

5 **Ինչպիսի՞ք են հակատանկային ականները ըստ պայթուցիչ սարքի կառուցվածքի:**

1. Հպումային, ոչ հպումային:
2. Ականապայթուցիկ, ոչ պայթուցիկ, համակցված:
3. Տեղային, մասշտաբային:
4. Կառավարվող, ոչկառավարվող:

6 **Ինչպե՞ս են բնորոշվում մոտոհրաձգային ջոկի մարտական հնարավորությունները:**

1. Ջոկի մարտական պատրաստականության մակարդակով և տեղանքի բնույթով:
2. Ջոկի կրակային հզորությամբ և անձնակազմի բարոյահոգեբանական վիճակով:
3. Ջոկի կրակային հզորությամբ և հակառակորդի գործողությունների բնույթով:
4. Ջոկի կրակային հզորությամբ և զորաշարժային ունակությամբ:

7 **Ե՞րբ է միացել Հայաստանի Հանրապետությունը Ժնևյան կոնվենցիաներին և կից լրացուցիչ արձանագրություններին:**

1. 1991թ. Սեպտեմբերի 21-ին:
2. 1993թ. Մարտի 31-ին:
3. 1995թ. Հունիսի 5-ին:
4. 1992թ. Մայիսի 9-ին:

8 **Ուլքե՞ր են գտնվում միջազգային մարդասիրական իրավունքի պաշտպանության տակ:**

1. Զինված ընդհարումների զոհերը, ռազմագերիները, բժշկական անձնակազմը:
2. Զինված ընդհարումների զոհերը, բժշկական ու հոգևոր անձնակազմը:
3. Զինված ընդհարումների զոհերը, ռազմագերիները, հետախույզները:
4. Զինված ընդհարումների զոհերը, ռազմագերիները, ռազմավարը:

9 **Ի՞նչ փաստաթղթով է կարգավորվում հիվանդների և վիրավորների կարգավիճակը:**

1. 1864թ. Ժնևի կոնվենցիայով:
2. 1907թ. Հաագայի կոնվենցիայով:
3. Ժնևի 1949թ. I և II կոնվենցիաներով և 1977թ. լրացուցիչ արձանագրությամբ:
4. 1929թ. Ժնևի կոնվենցիայով:

10 Ո՛րն է կոչվում գնդակի հետագիծ:

1. Այն կոր գիծն է, որն արտագծում է պարկուճի ծանրության կենտրոնը օդում թռիչքի ժամանակ:
2. Այն կոր գիծն է, որն արտագծում է փամփուշտը օդում թռիչքի ժամանակ:
3. Այն կոր գիծն է, որն արտագծում է գնդակի ծանրության կենտրոնը օդում թռիչքի ժամանակ:
4. Այն կոր գիծն է, որն արտագծում է գնդակը օդում:

11 Ո՛րն է կոչվում ուղիղ կրակոց:

1. Որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը փոխում է իր ուղղությունը:
2. Որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը չի փոխում իր ուղղությունը:
3. Որի ժամանակ ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը իր ողջ երկարությամբ բարձրանում է նշանառման գծից վեր, նշանակետից բարձր:
4. Որի ժամանակ գնդակի թռիչքի հետագիծը իր ողջ երկարությամբ չի բարձրանում նշանառման գծից վեր, նշանակետից բարձր:

12 Ո՛րը ավտոմատի մեխանիզմ չէ:

1. Զարգանաձգանային մեխանիզմ:
2. Փակադակի շրջանակ գազամխոցով:
3. Հետադարձ մեխանիզմ:
4. Նշանոցային հարմարանք:

13 Ի՞նչի՛ց է բաղկացած ձեռքի բեկորային նոնակը:

1. Պատյանից , պայթուցիկ լիցքից, բռնկիչից:
2. Պատյանից , պայթուցիկ լիցքից, բռնկվող նյութի տեսակից:
3. Պատյանից , պայթուցիկ լիցքից, բռնկման ժամանակ բեկորների ցրման շառավիղից:
4. Պատյանից , պայթուցիկ լիցքից, հրապատիճ-ճայթիցիչ:

14 Ըստ նշանակության միջուկային զենքի ի՞նչ տեսակներ կան:

1. Փոքր, մեծ, միջին հզորության:
2. Ռազմավարական, օպերատիվ-մարտավարական, մարտավարական:
3. Ատոմային, նեյտրոնային, վակուումային:
4. Նեյտրոնային, ջերմամիջուկային, վակուումային:

15

Որո՞նք են տեխնաձին բնույթի արտակարգ իրավիճակները:

1. Հրդեհներ, պայթյուններ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կոյուղու համակարգերում, հիդրոդինամիկական վթարներ, փլուզումներ, ավիովթարներ:
2. Հրդեհներ, պայթյուններ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կենսապահովման կոմունալ համակարգերում, կենցաղային թունավորումներ, հիդրոէլեկտրաբանական վթարներ:
3. Հրդեհներ, պայթյուններ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, վթարներ ռադիոակտիվ նյութերի արտանետումով, վթարներ կենսապահովման կոմունալ համակարգերում, հիդրոդինամիկական վթարներ, շենքերի և կառուցվածքների հանկարծակի փլուզումներ, տրանսպորտային վթարներ:
4. Հրդեհներ, կենցաղային թունավորումներ, վթարներ ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետումով, հիդրոէլեկտրաբանական վթարներ:

16

Որո՞նք են արտակարգ իրավիճակներում և ռազմական դրությունում բնակչության պաշտպանության հիմնական եղանակները:

1. Տարհանում, պատսպարում, անհատական պաշտպանական միջոցներով ապահովում:
2. Տարհանում, պատսպարում, տեղափոխում:
3. Պատսպարում, անհատական պաշտպանական միջոցներով ապահովում, վարակազերծում:
4. Տարհանում, պատսպարում, ջրով և սննդամթերքով ապահովում:

17

Որո՞նք են խոցման ոչ ավանդական զենքերը:

1. Լազերային, բիոտիկական, երկրաֆիզիկական, կենսաբանական զենքերը:
2. Լազերային, բիոտիկական, միջուկային, տեղեկատվական զենքերը:
3. Լազերային, քիմիական, երկրաֆիզիկական, տեղեկատվական զենքերը:
4. Լազերային, բիոտիկական, երկրաֆիզիկական, տեղեկատվական զենքերը:

18

Ինչպիսի՞ խմբերի է բաժանվում արտակարգ իրավիճակները ըստ կանխատեսման:

1. Կանխատեսելի, ոչ կանխատեսելի:
2. Արագ, միջին, դանդաղ զարգացող:
3. Արագ, դանդաղ, ակնթարթային զարգացող:
4. Կանխելի, մասնակի կանխելի, անկանխելի:

19 Ովքե՛ր են հանդիսանում զինծառայողի համար ուղղակի պետեր:

1. Զինվորական ավելի բարձր կոչում ունեցող զինծառայողները:
2. Պետերը, որոնց զինծառայողները ենթարկվում են ծառայության բերումով, թեկուզ ժամանակավորապես:
3. Զինվորական ավելի բարձր պաշտոն զբաղեցնող զինծառայողները:
4. Վաշտի հրամանատարը և բարձր:

20 Ո՛րը վաշտի հերթապահի ծառայողական փաստաթուղթ չէ:

1. Մաքրման համար վաշտին կցված տարածքի սխեմա:
2. Առավոտյան մարմնամարզության համար համազգեստի նմուշներ:
3. Միանգամյա անցաթղթերի հաշվառման գիրք:
4. Օրվա կարգացուցակ:

21 Ու՛մ հրամանով է վաշտի հերթապահը զենք բաց թողնում:

1. Պահակապետի հրամանով:
2. Ուղղակի պետերի հրամանով:
3. Անմիջական պետերի հրամանով:
4. Վաշտի հրամանատարի կամ ավագի հրամանով:

22 Ո՛վ կարող է իջեցնել սերժանտի պաշտոնը կամ զինվորական կոչումը մեկ աստիճանով:

1. Զորամասի հրամանատարը:
2. Գումարտակի հրամանատարը:
3. Վաշտի հրամանատարը:
4. Դասակի հրամանատարը:

23 Ե՛րբ կարող է արձակվելիս զինծառայողին վերապահվել համազգեստ կրելու իրավունք:

1. Ունի 15 և ավել տարվա անբասիր ծառայության ստաժ:
2. Ունի 10 տարվա անբասիր ծառայության ստաժ:
3. Ունի 7 տարվա անբասիր ծառայության ստաժ:
4. Ունի 5 տարվա անբասիր ծառայության ստաժ:

24 Ի՞նչ է շարքի ճակատը:

1. Շարքի վերջին տողանը:
2. Շարքի այն կողմը, որը համընկնում է շարժման ուղղության հետ:
3. Շարքի սկիզբը շարքի դարձումներից հետո:
4. Շարքի այն կողմը, որին զինծառայողները դարձված են դեմքով:

25 Ո՛րն է շարքի թև:

1. Շարքի աջ կամ ձախ վերջավորությունը դարձումներից առաջ:
2. Շարքի աջ կամ ձախ վերջավորությունը դարձումներից հետո:
3. Շարքի աջ կամ ձախ վերջավորությունը:
4. Շարքի աջ կամ ձախ կողմի խորությունը:

26 Ո՛րն է շարքի հեռավորություն:

1. Զինձառայողների /մեքենաների/, ստորաբաժանումների, գորամասերի միջև դեպի խորքն ընկած արանքը:
2. Զինձառայողների /մեքենաների/, ստորաբաժանումների, գորամասերի միջև ճակատային գծով հեռավորությունը:
3. Զինձառայողների /մեքենաների/, ստորաբաժանումների, գորամասերի միջև թիկունքային գծով հեռավորությունը:
4. Ստորաբաժանումների միջև եղած հեռավորությունը:

27 Քա՛նի ստորաբաժանում է մասնակցել Հայրենական պատերազմին:

1. 6 հայկական կորպուս:
2. 6 հայկական գունդ:
3. 6 հայկական վաշտ:
4. 6 հայկական դիվիզիա:

28 Ե՛րբ է տեղի է ունեցել Ղարաքիլիսայի ճակատամարտը:

1. 1920թ. հունիսի 24-ից 28-ը:
2. 1918թ. մայիսի 24-ից 28-ը:
3. 1918թ. մայիսի 25-ից 30-ը:
4. 1919թ. մայիսի 25-ից 30-ը:

29 Սղնախները ե՛րբ և ո՛րտեղ են ստեղծվել:

1. Խամսայի մելիքությունում 18-րդ դար:
2. Արցախում 18-րդ դար:
3. Սյունիքում և Վայոց ձորում 17-րդ դար:
4. Արցախում և Սյունիքում 17-18-րդ դար:

30 Ինչպե՛ս են կոչել Արշակունյաց շրջանում հեծելազորի հրամանատարին:

1. Թագակապ ասպետ:
2. Հեծելազորի գեներալ:
3. Մարաջախտ:
4. Իշխանաց իշխան:

31 Ի՞նչ ճանապարհով է փոխանցվում աղիքային հիվանդությունները:

1. Մաշկը:
2. Բերանը:
3. Արյունը:
4. Քիթը:

32 Ի՞նչ ընդհանուր ու վտանգավոր ախտանիշ ունեն շոկերը:

1. Շնչառական սուր խանգարումներ:
2. Արյան շրջանառության սուր խանգարումներ:
3. Նյարդային խանգարումներ:
4. Մարսողության խանգարումներ:

33 Արևահարության և ջերմահարության ի՞նչ տեսակներ կան:

1. Ընդհանուր, տեղային և վերջույթային:
2. 1-ին, 2-րդ և 3-րդ աստիճանի:
3. 1-ին, 2-րդ, 3-րդ, և 4-րդ աստիճանի:
4. Թեթև, միջին և ծանր աստիճանի:

34 Ինչպիսի՞ն է լինում տեղանքը ըստ ռելիեֆի բնույթի:

1. Լեռնային, հարթավայրային և ջրային:
2. Հարթավայրային, բլրային և լեռնային:
3. Ցամաքային և ջրային:
4. Լեռնային, հարթավայրային, ճահճային:

35 Որո՞նք են տեղագրական քարտեզների մասշտաբները:

1. 1:10000, 1:20000, 1:100000, 1:200000, 1:250000, 1:500000
2. 1:5000, 1:1000, 1:2500, 1:5000, 1:50000, 1:100000
3. 1:25000, 1:50000, 1:100000, 1:200000, 1:500000, 1:1000000
4. 1:2500, 1:5000, 1:10000, 1:20000, 1:50000, 1:100000

36 Որո՞նք են տեղանքի ուսումնասիրման ձևերը:

1. Դիտարկում, զննում, քարտեզների միջոցով:
2. Հետախուզումը, օդալուսանկարներով, քարտեզների միջոցով:
3. Օդալուսանկարներով, դիտարկմամբ, հետախուզությամբ:
4. Դիտարկում, հետախուզում, տեղազննում:

37 Որոշել մինչև նշանակետը եղած հեռավորությունը, եթե նշանակետը 2 մ բարձրությամբ զրահամեքենա է և փակվում է ճկույթով:

1. 67 մ
2. 100 մ
3. 1000 մ
4. 670 մ

38 Որոշել նշանակետի բարձրությունը, եթե այն երևում է հեռադիտակի սանդղակի 1 մեծ և 2 փոքր բաժանքներով և գտնվում է 500 մ հեռավորության վրա:

1. 7.5 մ
2. 10 մ
3. 100 մ
4. 75 մ

39 Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին ձախ կողային է և չափավոր: Նշանակետը գտնվում է 800 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿՁԱ ավտոմատից:

1. 6 թիրախ դեպի աջ
2. 3 թիրախ դեպի աջ
3. 3 թիրախ դեպի ձախ
4. 6 թիրախ դեպի ձախ

40 Որոշել քամու ճշգրտումը, եթե քամին ձախ կողային է և չափավոր: Նշանակետը գտնվում է 400 մ հեռավորության վրա, հրաձգությունը վարվում է ԿՁԱ ավտոմատից:

1. 1 թիրախ դեպի ձախ
2. 1 թիրախ դեպի աջ
3. 2 թիրախ դեպի աջ
4. 2 թիրախ դեպի ձախ

41 2 կտ հզորությամբ պայթյունի կործանարար շառավիղը 980 մ է: Գտնել վարակված գոտու մակերեսը:

Ռադիոակտիվ մասնիկները տարածվում են բոլոր ուղղություններով:

1. $S=3$ կմ²
2. $S=6$ կմ²
3. $S=30$ կմ²
4. $S=60$ կմ²

42

Նշանակետի բարձրությունը 75 սմ է, այն գտնվում է 400 մ հեռավորության վրա: Որոշել անկյունային մեծությունը:

1. $U = 0-01$
2. $U = 0-02$
3. $U = 0-20$
4. $U = 0-10$

43

1:25000 մասշտաբի քարտեզի վրա չափակարկինով չափվել է 13 սմ, իսկ կուրվիմետրով նույն հատվածի երթուղին՝ 17 սմ: Որոշել ուղիղ գծով և իրական երթուղով հեռավորությունները մետրերով և դրանց տարբերությունը:

1. 4250 մ, 6250 մ, 1970 մ
2. 3150 մ, 4350 մ, 1200 մ
3. 3250 մ, 4250 մ, 1000 մ
4. 3550 մ, 5250 մ, 1700 մ

44

Կայծակի որոտի ձայնը փայլատակումից հետո դիտորդը լսեց 9 վրկ հետո: Որոշել կայծակի հեռավորությունը դիտորդից:

1. 2400 մ
2. 2800 մ
3. 2970 մ
4. 3010 մ

45

Մարդու հասակը 1,78 մ է: Որոշել նրա քայլի երկարությունը:

1. $E = 0,84$ մ
2. $E = 0,88$ մ
3. $E = 0,86$ մ
4. $E = 0,82$ մ

46

Հաշվել հակադարձ ազիմուտները, եթե մագնիսական ազիմուտները տրված են՝ 20° , 330° :

1. 80° , 100°
2. 160° , 180°
3. 200° , 150°
4. 220° , 250°

47

3 ավտոմատավոր մինչև նշանակետը քայլերով չափել են համապատասխանաբար 440մ, 530մ և 470մ հեռավորություն: Որոշել հեռավորության միջին արժեքը:

1. 480 մ
2. 485 մ
3. 475 մ
4. 500 մ

48

Համապատասխանեցնել կամավորական ջոկատները՝ հրամանատարներին:

- | | |
|-------------------|------------------------|
| ա) 3-րդ զորաջոկատ | 1. Անդրանիկ Օզանյան |
| բ) 4-րդ զորաջոկատ | 2. Դրաստամատ Կանայան |
| գ) 1-ին զորաջոկատ | 3. Համագասպ Սրվանձտյան |
| դ) 2-րդ զորաջոկատ | 4. Արշակ Գաֆավյան |

49

Համապատասխանացնել միջազգային մարդասիրական իրավունքի սահմանումները:

- | | |
|--|--------------------------------|
| ա) Միջազգային զինված ընդհարման մեջ գտնվող երկրի զինված ուժերի կազմի մեջ մտնող անձինք: | 1. Ռազմագերիներ են |
| բ) Անձինք, որոնք հատուկ հավաքվել և անմիջականորեն մասնակցում են մարտական գործողություններին՝ անձնական օգուտ քաղելու նպատակով: | 2. Վարձկաններ են |
| գ) Կոմբատանտները, որոնք ընկել են հակառակորդ կողմի իշխանության տակ: | 3. Կոմբատանտներ (մարտիկներ) են |
| դ) Անձինք, որոնք գործում են գաղտնի կամ խաբեության ճանապարհով, հավաքում են տեղեկություններ կողմերից մեկի հսկած տարածքում՝ դրանք հետագայում հակառակ կողմին փոխանցելու համար: | 4. Լրտեսներ են |

Համապատասխանացնել ավտոմատի մարտական հատկությունները:

- ա) 440 մ
- բ) 350 մ
- գ) 1350 մ
- դ) 1500 մ

1. <<ԿՁԱ>> ավտոմատի մահաբեր ուժի հեռավորությունը:
2. <<ԿՁԱ>> ավտոմատի ուղիղ կրակոցի հեռավորությունը կրծքային ֆիզուրի վրա:
3. <<ԱԿ-74>> ավտոմատի մահաբեր ուժի հեռավորությունը:
4. <<ԱԿ-74>> ավտոմատի ուղիղ կրակոցի հեռավորությունը կրծքային ֆիզուրի վրա: